ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Նախնական մասնագիտական կրթության «Ոստիկան» որակավորման «Կրիմինալիստիկա» առարկայի դասընթացի

Քննարկվել և հաստատվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի «Հատուկ պատրաստականություն» կրթաճյուղի նիստում՝ արձանագրություն թիվ <u>4</u> 01.06.2018թ.

ք. Երևան 2018թ.

1. Դասընթացի ընդհանուր ծավալը ըստ պարապմունքի տեսակների

Ուսումնական պլանին համապատասխան դասընթացի ուսումնասիրման համար հատկացված է 24 ժամ, որից՝

- դասախոսություն 12 ժամ,
- գործնական 2 ժամ,
- սեմինար 10 ժամ։

2. «Կրիմինալիստիկա» առարկայի դասընթացի ուսուցման նպատակը և խնդիրները

Դասընթացի հիմնական նպատակն է՝ ոստիկանության կրտսեր խմբի պաշտոններում ծառայության անցնելու նպատակով նախնական մասնագիտական կրթություն ստացող սովորողների մոտ ձևավորել ոստիկանության ծառալողի կողմից դեպքի վայրում hnwdhawun գնահատելու, հանցագործության հետքերը հայտնաբերելու և ճանաչելու տեսական մասնագիտական գիտելիքներ, ինչպես նաև ցարգացնել՝ իր սաիմաններում, իրավասության անիետաձգելի գործողություններ իրականացնելու հմտություններ և կարողություններ։

Դասընթացի դասավանդման ընթացքում լուծվում են մասնագիտական ուսուցման հետևյալ խնդիրները.

- 1. Կրիմինալիստիկայի հիմնական գիտական դրույթների վերաբերյալ ձևավորել ընդհանուր գիտելիքներ։
- 2. Ծանոթացնել մարդու արտաքին հատկանիշների նկարագրման համակարգին, հատուկ թղթերի և փաստաթոթերի կեղծման եղանակներին ճանաչման ձևերին։ դրանց Հաղորդված nι գիտելիքների ձևավորել համապատասխան իիման վրա իմտություններ և կարողություններ։

3. Հետքերի մասին կրիմինալիստիկական ուսմունքի գիտական հիմունքների, դատական ձգաբանության, հոգեներգործուն նյութերի և դրանց ճանաչման եղանակների ուսուցման միջոցով սովորողների մոտ զարգացնել ոստիկանության ծառայողի կողմից դեպքի վայրում՝ իր իրավասության սահմաններում անհետաձգելի գործողություններ իրականացնելու գործնական հմտություններ և կարողություններ։

3. Դասընթացի բովանդակության յուրացման մակարդակին ներկայացվող պահանջները

Դասընթացի ավարտից հետո սովորողը պետք է կարողանա՝

- 1. ներկայացնել անձի արտաքին հատկանիշների ընդհանուր դրույթները և «բանավոր պատկերի» նկարագրման մեթոդիկան՝ այն կիրառելով նաև գործնականում,
- 2. ցուցադրել հետքերի հայտնաբերման և պահպանման հմտություններ,
- 3. ճանաչել հոգեներգործուն նյութերը և դասակարգել դրանք ըստ տեսակների,
- 4. տիրապետել դեպքի վայրում հայտաբերված հրազենի և զինամթերքի պահպանման հմտություններին,
- 5. տիրապետել հատուկ թղթերում և փաստաթղթերում հնարավոր կեղծիքների հայտնաբերման հմտություններին։

4. Կապը ուսումնական պլանով նախատեսված այլ առարկաների հետ

Դասընթացը սերտորեն կապված է ուսումնական պլանով նախատեսված այնպիսի առարկաների հետ, ինչպիսիք են «Ծառայության իրականացման մարտավարությունը» և «Հատուկ տեխնիկան»:

5. Դասընթացի ուսուցման մեթոդական ցուցումներ.

Ուսուգումն իրականացվում է դասախոսությունների, գործնական պարապմունքների և սեմինարների տեսքով, որոնք անց են կացվում ինտերակտիվ մեթոդներով։ Դասավանդման ընթացքում օգտագործվում են նաև տեխնիակական միջոցներ, տեսանյութեր։ Նյութի յուրացմանը մեծապես օժանդակում են դիդակտիկ պաստառները։ Գործնական պարապմունքների րնթագքում պրակտիկ վարժությունների, իրավիճակային խնդիր-առաջադրանքների և դերախաղերի ปกุรกฤกป սովորողների մոտ ձևավորվում են գործնական անիրաժեշտ հմտություններ և ունակություններ, որոնք, տեսական գիտելիքներով ամրապնդելով, դառնում են առաջիկա արդլունավետ մասնագիտական գործունեության կարևոր պայման։

Սովորողներին հաղորդված գիտելիքների և հմտությունների ինտեգրացիան և ամրապնդումը ապահովելու համար ուսուցման արդյունքում անց են կացվում համալիր գործնական պարապմունքներ, որոնց ընթացքը վերահսկվում է դասախոսների միացյալ ուժերով։

6. Ուսումնական նյութի բովանդակությունը

Թեմա – 1. Կրիմինալիստիկայի ուսումնասիրության առարկան։ Կրիմինալիստիկական նույնացման հասկացությունը։

Թեմայի շրջանակում ուսումնասիրվող հարցերը՝

- 1. Կրիմինալիստիկայի հասկացությունը.
- 2. Կրիմինալիստիկայի ուսումնասիրության առարկան, խնդիրները.
- 3. Կրիմինալիստիկայի մեթոդները.

- 4. Կրիմինալիստիկայի համակարգը.
- 5. Նույնացման տեսության հասկացությունը.
- 6. Նույնացման ենթակա օբյեկտների դասակարգումը.
- 7. Նույնացման ենթակա օբյեկտների առանձնահատկությունները։ Ընդհանուր և հատուկ հատկանիշներ.
- 8. Խմբային պատկանելության պարզումը։

Թեմա – 2. Արտաքին հատկանիշներով անձի կրիմինալիստիկական նույնացման հասկացությունը և նշանակությունը։ «Բանավոր պատկերի» նկարագրման մեթոդիկան։

Թեմայի շրջանակում ուսումնասիրվող հարցերը՝

- 1. Արտաքին հատկանիշներով անձի կրիմինալիստիկական նույնացման հասկացությունը և նշանակությունը.
- 2. Ընդհանուր ֆիազիկական, անատոմիական, ֆունկցիոնալ և ուղեկցող հատկանիշները.
- 3. Անատոմիական հատկանիշների նկարագրման հերթականությունը.
- 4. Անձի գլխի, դեմքի և նրա մասերի նկարագրման կարգը.
- 5. Հատուկ նշանների հասկացությունը.
- 6. Բանավոր պատկերի կիրառումը հետախուզական և այլ նպատակներով։

Թեմա – 3. Հետքաբանությունը /Տրասոլոգիա/ և դրա կրիմինալիստիկական նշանակությունը։

Թեմայի շրջանակում ուսումնասիրվող հարցերը՝

- 1. Հետքերի հասկացությունը և կրիմինալիստիկական նշանակությունը.
- 2. Հետքերի առաջացման մեխանիզմը.

- 3. Մարդու կողմից թողնված հետքեր.
- 4. Տրանսպորտային միջոցների հետքեր.
- 5. Ջարդող գործիքների հետքեր.
- 6. Հետքերը պահպանելու կարգը։

Թեմա – 4. Հոգեներգործուն նյութերի տեսակները և դրանց ճանաչման եղանակները

Թեմայի շրջանակում ուսումնասիրվող հարցերը՝

- 1. Հոգեներգործուն նյութերը և դրանց տեսակները.
- 2. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի հասկացությունը, տեսակները.
- 3. Թունամոլություն.
- 4. Պրեկուրսորներ։

Թեմա – 5. Դատական ձգաբանությունը /հրազենագիտություն/ և դրա կրիմինալիստիկական նշանակությունը։

Թեմալի շրջանակում ուսումնասիրվող հարցերը՝

- 1. Դատական ձգաբանության հասկացությունը և կրիմինալիստիկական նշանակությունը.
- 2. Ձեռքի հրազենների դասակարգումը.
- 3. Դատական ձգաբանության հետազոտությունների օբյեկտները.
- 4. Հանցագործությունների կատարման ժամանակ օգտագործված հրազենի գտնվելու հավանական տեղերը.
- 5. Հայտնաբերված հրազենը պահպանելու կանոնները.
- 6. Դատաձգաբանական փորձաքննությամբ լուծվող հարցերը։

Թեմա – 6. Փաստաթղթերի կեղծման եղանակները և դրանց հատկանիշները

Թեմայի շրջանակում ուսումնասիրվող հարցերը՝

- 1. Փաստաթղթերի կրիմինալիստիկական հասկացությունը.
- 2. Անձնագրի ռեկվիզիտները.
- 3. Փաստաթղթերի կեղծման եղանակները.
- 4. Փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտության հասկացությունը, խնդիրները և օբյեկտները։

Գրականության ցանկ

- 1. Ա Բախշինյան, Բ.Ալեքսանյան, Ս.Մարգարյան «Կրիմինալիստիկա սխեմաների հավաքածու» դասագիրք, Երևան 2003թ.
- 2. Լ.Օհանյան «Կրիմինալիստիկան Հայաստանի Հանրապետությունում» Երևան 2007թ.
- 4. «Թմրանիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանաջության հետ կապված հանցագործությունների բացահայտման վերաբերյալ մեթոդական օգնություն», Երևան 2006թ.
- 5. Л.Андреев «Угаловно-правовое противодействие незаконному обороту наркотических средств или психотропных веществ» С.Петербург 1998г.
- 6. Р.Белкин «Криминалистика» Учебник для ВУЗ-ов 2-ое издание Москва 2005г.
- 7. А. Дворкин «Настольная книга следователя» Москва 2006г.
- 8. А.Желудков «Криминалистика» Москва 2005г.
- 9. В.Мальков «Криминалогия» Учебник для ВУЗ-ов 2-ое издание Москва 2006г.